ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը 24.09.2014թ. թիվ 27/6-Լ որոշմամբ ստեղծել է ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչություն, ինչպես նաև հաստատել է ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության կանոնադրությունը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 21.1 կետի իմաստով ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցչությունը հանդիսանում է առանձնացված ստորաբաժանում,

ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 21.3 կետի պահանջով առ այն, որ *փաստաբանների պալատի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Փաստաբանների պալատի նախագահի կողմից ու գործում են նրա կողմից տրված լիազորագրի հիման վրա,*

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության ղեկավար նշանակել փաստաբան Ռուբեն Մարատի Հակոբյանին (արտոնագիր թիվ 833):

2. Սահմանել, որ Ռուբեն Հակոբյանը գործում է ՀՀ փաստաբանների պալատի Հյուսիսային ներկայացուցչության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում տրված լիազորագրի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

26 սեպտեմբերի 2014թ.
թիվ 331-Ա
ք. Երևան